



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱՊԱՎԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ապավեն համայնք, գ. Ապավեն
☎ 093-67-40-74
Էլ. Փոստ՝ apaven.ori@mta.gov.am

Թիվ Ե / 129

<< 26 >> դեկտեմբերի 2016թ.

ՀՀ Լոռու մարզպետ
պարոն Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն Ա. Նալբանդյան.

Կից ներկայացնում ենք Ձեզ Ապավեն համայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման
ծրագիրը և համայնքի ավագանու 23.12.2016 թվականի №№ 22 –Ն որոշումը:

Առդիր՝ << 25 >> թերթ և << 4 >> էլեկտրոնային կյութեր:

ԱՊԱՎԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Հ. ԽԱՉԱՏՈՒԹՅԱՆ

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

գ. Ապավեն
26 / 12 / 2016թ.





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱՊԱՎԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ապավեն համայնք,
Հեռ՝ 093-67-40-74
Էլ. Փոստ՝ apaven.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 23 » դեկտեմբերի 2016 թվականի № 22 - Ն

ԱՊԱՎԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 2-րդ կետով Ապավեն համայնքի ավագանին՝

Որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ապավեն գյուղական համայնքի 2017 – 2021 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ՝

№	Ազգանուն, Անուն	Կողմ (5)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
1	Դադյան Ապրես		-	-
2	Դումիկյան Տաթևիկ		-	-
3	Խաչատրյան Նորիկ		-	-
4	Նորոյան Մարգարիտ		-	-
5	Սուրյան Սևակ		-	-

ԱՊԱՎԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Հ. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

23 / 12 / 2016 թ.
Գ. Ապավեն



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՎԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ**

**2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Հաստատվել է՝ Ապրիլին համայնքի ավագանու թիվ 22-Ն որոշմամբ

Գիտի ամսաթիվը 23.12.2016թ.



ԱՊԱՎԵՆ 2017թ

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն.....	4
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն.....	4
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը.....	6
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը	8
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները	8
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ	9
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՄ) վերլուծություն	12
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում	13
3.1. Համայնքի զարգացման տեսլական	13
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ	14
4. ՀՀԶԾ ֆինանսավորում	19
5. ՀՀԶԾ մոնիթորինգ.....	19

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հարգելի համագյուղացիներ

Ձեզ եմ ներկայացնում Ապավեն համայնքի զարգացման ծրագիրը: Համայնքի զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ապավեն համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրի ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2021 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները: Համայնքի զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ):

Համայնքի զարգացման ծրագիրն իր մեջ ներառում է՝ համայնքի իրավիճակի բնութագիրը, վերլուծությունը և գնահատումը, համայնքի տեսլականը, ռազմավարության և ՀԶԾ-ի հիմնական նպատակների սահմանումը, նախատեսվող հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերը, ֆինանսական իրավիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը, ոլորտային ծրագրերը, գույքի կառավարման ծրագիրը, զարգացման ծրագրի մոնիթորինգը:

Հուսով եմ, որ սատար կկանգնեք, որպեսզի կարողանանք իրականացնել մեր առջև դրված խնդիրները, համայնքը դարձնել բարեկեցիկ և զարգացած համայնք:

Կանխավ շնորհակալ եմ բոլոր այն գործարարներին, համայնքաբնակներին և շահագրգիռ կազմակերպություններին և անհատներին, որոնք կօգնեն համայնքի զարգացման ծրագրերի ինականացմանը, հասարակական կյանքի ակտիվացման գործնաթացներին:

- *Համայնքում առկա հիմնախնդիրները*

- Միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների անմխիթար վիճակը և ներհամայնքային ճանապարհի գիշերային լուսավորության բացակայությունը,
- Գազամատակարարման բացակայությունը (գազատարի աշխատանքների մի մասը կատարված է),
- Խմելու ջրի ներքին ցանցի մաշվածությունը (կատարել վերանորոգում և լրացուցիչ աշխատանքներ),
- Կարկտահարություններից համայնքի տների և համայնքապետարանի վնասված կտուրները (ազբեստե շիֆերապատ):

- *Լուծման ուղիները*

- Համայնքի սեփական եկամուտներից,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներից
- Արտաքին պաշտոնական դրամաշնորհներից,
- Բարեգործություն/նվիրատվություններից
- Այլ աղբյուրներից,

Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմը ավագանին, քննարկվել ու հաշվի են առնվել հանրային լուսմների արդյունքում կատարված բոլոր առաջարկությունները: Ծրագիրը հաստատվել է համայնքի ավագանու անդամների կողմից:

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ապավեն գյուղը որպես համայնք ձևավորվել է 1990թ.-ին Ադրբեջանի և Վրաստանի Հանրապետություններից ներգաղթված բնակիչներով: Ապավեն համայնքը սահմանամերձ է (սահմանակից է Վրաստանի Հանրապետության հետ), գտնվում է մարզկենտրոնից 65 կմ դեպի հյուսիս-արևելք: Համայնքի տարածքը կազմում է 309.8 հեկտար: Համայնքն ծովի մակարդակից բարձր է 1760մ, չկան անտառածածկ տարածքներ, ռելիեֆը լեռնային է: Ապավենի օդը կազդուրիչ է ու առողջարար, բուսականությունը լեռնային /ալպիական/, բնակիչները հիմնականում զբաղվում են անասնապահությամբ: Համայնքի տարածքը գտնվում է կլիմայական ցուրտ գոտում: Չմեղը ցուրտ է, կայուն և երկարատև ձյանածածկությով: Գարունը երկարատև է ու ցուրտ: Ցրտահարությունները միջին տվյալներով վերջանում են ապրիլին: Ամառը կարճ է, զով ու չոր: Աշունը սառն է, առաջին կեսում գերակշռում է քիչ ամպամած ու տաք եղանակը, երկրորդ կեսը փոփոխական է: Աշնանային ցրտահարություններն սկսվում են սեպտեմբերի

վերջին և հոկտեմբերի սկզբին: Հաճախ են լինում երկարատեվ անձրեվներ, կարկտահարություններ և ուժգին քամիներ:

Համայնքի բնակչության առկա թիվը՝ 127,
այդ թվում՝

Ընդամենը	Այդ թվում՝ արական	Այդ թվում՝ իգական
1. մինչև 1 տարեկան - 3	2	1
2. 1-2 տարեկան - 3	1	2
3. 3-4 տարեկան - 4	1	3
4. 5-6 տարեկան - 5	4	1
5. 7-10 տարեկան - 8	5	3
6. 11-14 տարեկան - 5	5	0
7. 15-17 տարեկան - 2	1	1
8. 18-22 տարեկան - 10	5	5
9. 23-45 տարեկան - 29	14	15
10. 46-62 տարեկան - 50	18	32
11. 63 և ավելի տարեկան - 8	2	6

հաշմանդամներ – 8

ժամանակավոր բնակիչներ - 5

ընտանիքների (ծխերի) թիվը – 31

Բնակչության սոցիալական կազմը՝
այդ թվում՝

կենսաթոշակառուներ – 13,

միակողմանի ծնողագուրկ երեխաներ – 1,

երկկողմանի ծնողագուրկ երեխաներ – չկան,

հայրենական պատերազմի մասնակիցներ- չկան,

առողջապահություն – 1,

ՏԻՄ- 2,

դպրոցականներ – 10,

բանակում ծառայողներ -1,

հաշմանդամներ – 8,

գյուղատնտեսությամբ զբաղվողներ – 64,

գյուղատնտեսության վոլոնտուր վարձու աշխատողներ – 7,

գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն - 71

վարձու աշխատողներ ոչ գ/տ ոլորտում – 3,

զբաղվածություն չունեցողներ – 15,

ընտանիքների (ծիների) թիվը – 31:

Համայնքում առկա է 10 դպրոցական երեխա, որոնք հաճախում են հարևան՝ Արձնի գյուղի միջնակարգ դպրոցը:

Համայնքի բնակիչ հանդիսացող բուժքույրը ախատում է Արձնի գյուղի բուժկետում (Համայնքու չկա բուժկետ):

2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 4.750.2 մլն դրամ:
- Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 1,110 մլն դրամ(23.3%):
- Աղյուսակում բերված են համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները 2016թ.


Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը	Ցանքատարածության չափը	Արտադրանքի քանակը
կարտոֆիլ	3հա	200g
կաղամբ	0.45հա	1.3g
բանջարեղեն	1.36հա	6.7g
միս		50g
ձու		40հազ.հատ
մեղր		6g

- Աղյուսակում բերված են համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները 2016թ.

Անասունների տեսակը	Գլխաքանակը
Խոշոր եղջերավոր անասուններ	102
Այդ թվում կովեր	55
խոզեր	10

թռչուններ	158
Այդ թվում հավեր	120
մեղվարնտանիքներ	40

- Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են 6 ընտանիքներ,
- Համայնքում գործազրկության մակարդակը կազմում է 12.2%:
- Ապավեն համայնքը հարուստ է ալպիական բուսականությամբ, որի լուսանկարները ներկայացված են ստորև՝



2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

- 2017 թվականին նախատեսվում է համայնքում իրականացնել «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման» կարգով նախատեսված ծրագիրը, որը հնարավորություն կտա համայնքի բնակիչներին ամբողջովին կամ լիարժեք օգտագործել հողատեսքերը, չմտածելով ֆինանսական խնդիրների մասին:
- 2017 թվականին նախատեսվում է համայնքի գերեզմանատան ցանկապատման և բարեկարգման աշխատանքների իրականացում «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով՝ գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում» ծրագրի միջոցով: Սույն ծրագրի իրագործումը դրական կնպաստի և համայնքի բնակիչների սոցիալական ծանր վիճակին և համայնքի կառուցապատմանն ու բարեկարգմանն:
- Հարևան Արձնիի համայնքապետարանի հետ համատեղ նախատեսվում է վերանորոգել միջհամայնքային ճանանապարհի 2.8 կմ երկարությամբ ընդհանուր հատվածը, որը համայնքների բնակիչների համար հասանելի կդարձնի հասարակական տրանսպորտը: Գյուղացիների համար դյուրին կդառնա բուժ-սպասարկման հաստատություններին և գլխավոր մայրուղուն հասնելը: Այն կնպաստի գյուղացիների ապրելակերպի բարելավմանը և առողջության պահպանմանը:

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

N	Եկամուտի տեսակը	2017	2018	2019	2020	2021
	Ընդամենը եկամուտներ	4750.2 մլն	4750.4 մլն	4750.6 մլն	4750.8 մլն	4750.9 մլն
Ա	Հարկային եկամուտներ					
1	Հողի հարկ	298.5 հազ	298.5 հազ	298.5 հազ	298.5 հազ	298.5 հազ
2	Գույքահարկ փոխադրամիջոցներից	426.4 հազ	426.5 հազ	426.6 հազ	426.7 հազ	426.9 հազ
3	Եկամտահարկ					
4	Այլ հարկային եկամուտներ					
Բ	Տուրքեր					
1	Պետական տուրքեր					
2	Տեղական տուրքեր					
Գ	Ոչ հարկային եկամուտներ					

1	Վարձավճարներ	185.1 հազ	185.2 հազ	185.2 հազ	185.2 հազ	185.2 հազ
3	Տեղական վճարներ					
4	Այլ ոչ հարկային եկամուտներ	200.0 հազ	200.0 հազ	200.0 հազ	200.0 հազ	200.0 հազ
Դ	Դոտացիա	3640.2 մլն	3640.2 մլն	3640.3 մլն	3640.4 մլն	3640.4 մլն
Ե	Եկամուտներ կապիտալ գործառնություններից					
Զ	Տարեսկզբի ազատ մնացորդ					

2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Ապավեն համայնքի առջև ծառայած ընդհանուր հիմնական խնդիրներն են՝

Համայնքի բնակչության 80%-ը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում: Համայնքի զարգացման հիմնական խոչընդոտող գործոններն ու դժվարությունները նշված են ստորև.

1) Գործարար միջավայրի բարելավմանը և ձեռնարկատիրության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

- .ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման դժվարությունը,
- .բնակչության գործարար ոլորտի գիտելիքների պակասը,
- .ֆինանսի բացակայությունը
- .Համայնքի գույքի կառավարման խոչընդոտներն են՝
- .Ֆինանսական տղությունը,

2) Նախադպրոցական կրթության կազմակերպման խոչընդոտներն են ծնողական ներդրումների դժվարությունները:

3) Երիտասարդության ներգրավմամբ ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպման խոչընդոտող գործոններն են՝

- .մշակութային կյանքի պասիվությունը,.

4) Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությանը խոչընդոտող գործոններ են՝

- .գործազրկությունը,
- .համայնքում գազաֆիկացման բացակայությունը,

5) Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսմանը խոչընդոտող գործոններն են՝

- .սպորտհրապարակ, մարզադահլիճ և մարզագույք չունենալը,

6) Համայնքում բնակարանային շինարարության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

- .համայնքաբնակների աղքատությունը,

7) Համայնքի բնակավայրերի կառուցապատմանը, բարեկարգմանը և կանաչապատմանը, համայնքի աղբահանությանը և սանիտարական մաքրմանը, կոմունալ տնտեսության

աշխատանքների ապահովմանը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանմանը և գործունեության ապահովմանը խոչընդոտող գործոններն են՝

- .ջրմուղ-կոյուղուբացակայությունը,
- .խմելու ջրագծի և ջրի ներքին ցանցի վթարային վիճակը,
- .միջոցների սղությունը,
- համայնքային գերեզմանատները ցանկապատվաց չեն,
- .փողոցային լուսավորության բացակայությունը:

8) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպմանը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանմանը և շահագործմանը խոչընդոտող գործոններն են՝

- .միջհամայնքային, ներհամայնքային ճանապարհների քայքայված վիճակը,
- .հանրային տրանսպորտի բացակայությունը,
- .կանգառների բացակայությունը,
- .ճանապարհային նշանների բացակայությունը

9) Պետության պաշտպանության իրականացման աջակցմանը խոչընդոտող գործոններն են՝

10) Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը խոչընդոտող գործոններն են՝

- .քաղաքացիական պաշտպանության գիտելիքների պակասը,
- .սեյսմիկ գոտում գտնվելը,
- .աղետներին պատրաստվածության ծրագրի բացակայությունը,
- .համայնքաբնակները պատրաստ չեն համապատասխան քայլերի դիմել վերահաս և փաստացի վտանգի դեպքում:

11) Գյուղատնտեսության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

- .որակյալ սերմի բացակայությունը,
- .սպառման շուկայի դժվար հասանելիությունը,
- .գլխավոր մայրուղուց հեռու լինելը,
- .միջհամայնքային ճանապարհի վատթար վիճակը:

12) Համայնքում շրջակա միջավայրի պահպանությանը խոչընդոտող գործոններն են՝

- .հեղեղատարների բացակայությունը,
- .աղբահեռացում չկազմակերպելը,

13) Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող Ապավեն համայնքում՝ զբոսաշրջության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

- .համայնքի հեռավորությունը մայրաքաղաքից,
- .զբոսաշրջիկների պահանջներին համապատասխան գիսհերելու և սանտարահիզենիկ պայմանների բացակայությունը,

.գովազդի բացակայությունը,

.տուրիստական գործակալությունների հետ կապ չունենալը,

14) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպմանը խոչընդոտող գործոններն են՝

.գործարար միջավայրի բացակայությունը,

.ձեռնարկությունների բացակայությունը,

.երիտասարդների միգրացիան,

15) Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.երիտասարդների չամուսնանալը,

.երիտասարդ ընտանիքների սոցիալապես պաշտպանված չլինելը,

.պետության կողմից աջակցության պակասը, աղքատությունը,

16) Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացմանը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմաններ իստեղծմանը խոչընդոտող գործոններն են՝

.բնակչության իրազեկվածության պակասը, բուժ- կետի բացակայությունը,

.նեղ մասնագիտությամբ բժիշկների համայնքներ չհաճախելը,

.անվճար բուժ սպասարկման քիչ լինելը:

17) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքում համապատասխան պայմաններ չունենալը,

18) Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստելուն խոչընդոտող գործոններն են՝

.հեռահաղորդակցման տեխնոլոգիաների գիտելիքների պակասը,

.ինտերնետ կապի անորակությունը,

.տեխնոլոգիաների անհասանելիությունը որոշ ընտանիքներին,

19) Համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով բարեգործության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքի երիտասարդների կամավորության պակասը,

.հանրային համախմբվածության և մասնակցության թույլ լինելը,

.տեղեկատվական տեխնոլոգիաներին չտիրապետելը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ ԾՆՈՂ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

- Գյուղացիները գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ՝
- ա/ հաճախակի են լինում կարկտահարություններ, որից գյուղացիները կորցնում են բերքի 60%-ը /կարկտահարություններից համայնքի տների ազբեստե շիֆերապատ կտուրները ամբողջովին վնասված են/,
- բ/ երկար տարիներ հողատեսքերը չեն ստացել համապատասխան պարատացու, մշակում, որից հողատեսքերը կորցրել են իրենց կարգի համապատասխանելիությունը,
- գ/ գյուղը չունի գյուղ. տեխնիկա,
- դ/ արոտավայրերը չունեն խմոցներ,
- ե/ գյուղացին չի կարողանում կատարել իր հարկային պարտավորությունները,
- զ/ գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների,
- է/ կենցաղային աղբահեռացում չի կատարվում:

2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՄ) վերլուծություն

<i>Համայնքի ուժեղ կողմեր</i>	<i>Համայնքի թույլ կողմեր</i>
<p>.Վրաստանի Հանրապետության հետ սահմանամերձ լինելը,</p> <p>.Համայնքի համեմատաբար բարենպաստ կլիման, գեղատեսիլ բնությունը,</p> <p>.Խմելու ջրի ներհամայնքային համակարգի առկայությունը,</p> <p>.Հեռահաղորդակցության և հեռուստատեսության առկայությունը,</p> <p>.Խոտհարքների և ալպիական արոտավայրերի առկայությունը;</p>	<p>.Միջհամայնքարին և Ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակը,</p> <p>.Գազատարի բացակայությունը,</p> <p>.Խմելու ջրի ցանցի ոչ բավարա վիճակը,</p> <p>.Սոցիալապես խոցելի ընտանիքների քանակը.</p> <p>.Ֆինանսական ռեսուրսների բացակայությունը,</p> <p>.Աշխատատեղերի պակաս,</p> <p>.Արտագնա աշխատանքի մեկնողների թվի աճը,</p> <p>.Միջհամայնքային հասարակական տրանսպորտի բացակայությունը՝ ապահովելով մշտական հաղորդակցություն մարզկենտրոնի և Տաշիր քաղաքի հետ:</p>
<i>Հնարավորություններ</i>	<i>Սպառնալիքներ</i>
<p>.Խմելու ջրի առկայությունը,</p> <p>.Խոտհարքների և ալպիական արոտավայրերի</p>	<p>.Տարերային աղետների վտանգ /ուժգին քամիներ, կարկտահարություն/,</p> <p>.Միջհամայնքարին և Ներհամայնքային</p>

<p>առկայությունը, .Համայնքի տարածքում բարձրորակ դեղաբույսերի և այլ բուսականության առկայությունը, .Համայնքի վարչական տարածքում անասնապահության և մեղվաբուծության առկայությունը, որոնք զգալիորեն նպաստում են սոցիալ-տնտեսական զարգացմանը:</p>	<p>ճանապարհների անբարեկարգ վիճակը / Ներհամայնքային ճանապարհի ջրահեռացման հեղեղատների բացակայության պատճառով վիճակն էլ ավելի է վատթարանում/, .Տրանսպորտային հանգույցների դժվար հասանելիությունը, .Խիստ կլիմա /ցրտահարություն/ .Արտագաղթ՝ /համայնքի երիտասարդների արտագնա աշխատանքի մեկնելը և չվերադառնալը վտանգում է համայնքի կենսագործնեությունը/:</p>
---	---

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1. Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի զարգացման տեսլականն է՝

- Համայնքը դարձնել անասնապահության զարգացման և գյուղատնտեսական մթերքների արտադրության և վերամշակման կենտրոն, բարեկարգ և մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և հանգստի համար գրավիչ բնակավայր:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի ռազմավարությունն է.

- Համայնքում անասնապահության զարգացման և անասնապահական մթերքների արտադրության ծավալների մեծացում՝ անասնազվխաքանակի տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով,
- Համայնքում կաթի, մսի հանձնման և վերամշակման արտադրամասի ստեղծում,
- Զարգացնել մեղվաբուծությունը /էկոլոգիապես մաքուր մեղրի արտադրանքի ընդլայնում/,
- Գազամատակարարում,
- Ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների նորոգում և բարեկարգում, արտաքին լուսավորության համակարգի անցկացում,
- Խմելու ջրի ներքին ցանցի նորոգում և բարեկարգում,
- Համայնքի գեզմանատան ցանկապատում և բարեկարգում,
- Բուժկետի և համայնքապետարանի կարուցում և վերանորոգում /պահանջվող նորմերին համապատասխան/,
- Աղբատ ընտանիքների թվի նվազեցում,
- Համայնքի սեփական տարեկան եկամուտների աստիճանաբար ավելացում,
- ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության աստիճանի հետևողական բարձրացում:

3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

- 1) Համայնքում գյուղատնտեսության /անասնապահության, հողագործության, մեղվապահության/ զարգացում՝ տնամերձերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով
- 2) Տեղական ինքնակառավարման բնակիչների մասնակցության ակտիվացում և բարելավում:
- 3) Գազաֆիկացումը:
- 4) Միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների վերանորոգում, բարելավում և ներհամայնքային ճանապարհի լուսավորում:
- 5) Աշխատատեղերի ապահովում, որն իր հերթի կկանխի արտագաղթը:
- 6) Բնական աղետներից՝ կարկտահարությունից վնասված համայնքի տների /ազբեստե շիֆերապատ/ կտուրների վերանորոգումը:
- 7) Ապահովել համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը: Կազմակերպել համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը: Կոմունալ տնտեսության աշխատանքներն ապահովել, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը կազմակերպել,
- 8) Աջակցել պետության պաշտպանության իրականացման հարցում:
- 9) Իրականացնել աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումները:
- 10) Գյուղատնտեսության զարգացումը խթանել:
- 11) Կազմակերպել համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը:
- 12) Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող Ապավեն համայնքում զբոսաշրջության զարգացումը /էկոտուրիզմ/ խթանել:
- 13) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումն ապահովել:
- 14) Համայնքում ծնելիությունը և բազմազավակությունը խթանել:
- 15) Ապահովել համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը:
- 16) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցությունը խթանել:
- 17) Բարեգործությունը խթանել՝ համայնքում առողջապահական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

ԾՐԱԳԻՐ 1

Ապավեն համայնքում ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը, գյուղատնտեսական, սոցիալական զարգացումը խթանելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել «Միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների վերանորոգում և բարելավում» ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ համայնքի բնակիչներն բարեկարգ ճանապարհով և հասարակական տրանսպորտով ապահովումը: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Կատարել միջհամայնքային ճանապարհների վերանորոգում /խճապատում/:

1.2. Կատարել ներհամայնքային ճանապարհների վերանորոգում /խճապատում/:

1.3. Կատարել ճանապարհների կահավորում:

1.4. Ներհամայնքային ճանապարհների լուսավորություն անցկացնել:

1.5. Երկու կանգառի կառուցում:

1.6. Հեղեղատարերի կառուցում /ջրահեռացման առուներ/:

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

2.1. Լոռու մարզպետարանի տրանսպորտի բաժնի հետ քննարկել, որպեսզի հասարակական տրանսպորտի գծի շահագործում իրականացվի, որը կնտաստի նաև կից Արծնի համայնքին:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ և անհրաժեշտ գումարի 3%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Ապավեն համայնքի բոլոր 127 բնակիչները և կից Արծնի համայնքի բնակիչները, ովքեր համատեղ օգտվում են ընդհանուր ճանապարհի 2.8կմ երկարությամբ Ապավեն – Նորաշեն հատվածից: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2020թ.:

Ծրագրի համառոտ նկարագրություն.

Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծը և բյուջեն: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, հայտարարել մրցույթ ճանապարհաշինարարական աշխատանքներ կատարող կազմակերպություն գտնելու նպատակով: Համապատասխան կազմակերպություն գտնելուց հետո կնքել երկկողմանի պաշտպանագիր: Ստանալ համապատասխան գումարը, կատարել համայնքային ներդրումներ, փոխանցել գումարը ընտրված կազմակերպությանը և կազմակերպել աշխատանքները:

Լոռու մարզպետարանի տրանսպորտի բաժնի հետ քննարկել, որպեսզի հասարակական տրանսպորտը ապահովի գծի շահագործումը:

Ընթացիկ ծախսեր՝ 15մլն դրամ

Կապիտալ ծախսեր՝ 20մլն դրամ

Ընդհանուր բյուջեն՝ 35մլն դրամ

ԾՐԱԳԻՐ 2

Ապավեն համայնքի բնակիչների սոցիալական մակարդակը բարելավման նպատակով անհրաժեշտ է իրականացնել «Համայնքի միջին ճնշման գազատարի կառուցում» ծրագիրը: 2011 թվականին սկսված ծրագիրը այժմ գտնվում է անավարտ վիճակում: Ծրագրը ավատին հասցնելու նպատակն և արդյունքներն են՝

Համայնքի բնակիչներին գազով ապահովելը և սոցիալական մակարդակի բարձրացումը: Բնակիչների ներգաղթը, ովքեր բնակվում են մոտակա համայնքներում, քանզի Ապավեն համայնքում ունեն սեփական անշրժ գույք:

Ծրագրի հիմնական գործողություններն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Տրամադրել կիսակառույց գազատար, համապատասխանեցնելով այն պահանջներին:

1.2. Ձեռք բերել համապատասխան խողովակներ:

1.3. Ձեռք բերել համապատասխան սարքավորումներ:

1.4. Կատարել կառուցման աշխատանքներ:

1.5. Կատարել փաստաթղթերի ձևակերպում:

1.6. Կատարել պետական գրանցում:

Ծրագրի իրականացման համար առկա փաստաթղթերը.

1. Աշխատանքային նախագիծը /ելակետային տվյալներ, գազմատակարարում, նախահաշիվ/,

2. Փորձաքննության նախահաշիվ:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ և անհրաժեշտ գումարի 3%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Ապավեն համայնքի բոլոր 127 բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2019թ.:

Ծրագրի համառոտ նկարագրություն.

Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, հայտարարել մրցույթ համապատասխան աշխատանքներ կատարող կազմակերպություն գտնելու նպատակով: Համապատասխան կազմակերպություն գտնելուց հետո կնքել երկկողմանի պարմանագիր: Ստանալ համապատասխան գումարը, կատարել համայնքային ներդրումներ, փոխանցել գումարը ընտրված կազմակերպությանը և կազմակերպել աշխատանքները:

Ծրագրի իրականացումից հետո համայնքը կունենա գազաֆիկացում իր հետ բերելով բարեկեցություն և սոցիալական վիճակի բարելավում:

Ծրագրի բյուջեն կազմում է՝

Ընթացիկ ծախսեր՝ 3մլն դրամ

Կապիտալ ծախսեր՝ 13մլն դրամ

Ընդհանուր բյուջեն՝ 16մլն դրամ

ԾՐԱԳԻՐ 3

Այսպես համայնքի խմելու ջրի կորուստների կանխում և բնակիչներին լիարժեք խմելու ջրով ապահովելու, ոսոցիալական մակարդակը բարելավելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել «Խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգում և լրացուցից ջրահավաք կայանի կառուցում» ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ համայնքի բնակիչների լիարժեք ջրամատակարարման ապահովումը:

Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

- 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.
- 1.1. Կատարել միջհամայնքային խմելու ջրի ցանցի վերանորոգում:
- 1.2. Կառուցել լրացուցիչ ջրահավաք կայան:
- 1.3. Ձեռք բերել համապատասխան խողովակներ:
- 1.4. Ձեռք բերել համապատասխան սարքավորումներ և նյութեր:
- 1.5. Կատարել կառուցման աշխատանքներ:
- 1.6. Կառուցել ջրահավաք կայանի ցանկապատը:
- 1.7. Նորոքել կենտրոնական ջրամբարի ցանկապատը:
- 1.8. Կատարել փաստաթղթերի ձևակերպում:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները՝ համայնքի կողմից ներդնել աշխատուժ և անհրաժեշտ գումարի 3%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Այսպես համայնքի բոլոր 127 բնակիչները և համայնքի վարչական տարածքում տեղակայված սահմանապահ ուղեկալի զին. ծառայողները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2019թ.:

Ծրագրի համառոտ նկարագրություն.

Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, հայտարարել մրցույթ ջրային աշխատանքներ կատարող կազմակերպություն գտնելու նպատակով: Համապատասխան կազմակերպություն գտնելուց հետո կնքել երկկողմանի պարմանագիր: Ստանալ համապատասխան գումարը, կատարել համայնքային ներդրումներ, փոխանցել գումարը ընտրված կազմակերպությանը և կազմակերպել աշխատանքները:

Ծրագրի իրականացումից հետո համայնքը կունենա լիարժեք և որակյան խմելու ջուր իր հետ բերելով բարեկեցություն և սոցիալական վիճակի բարելավում:

Ծրագրի բյուջեն կազմում է՝
Ընթացիկ ծախսեր՝ 3 մլն դրամ
Կապիտալ ծախսեր՝ 5 մլն դրամ
Ընդհանուր բյուջեն՝ 8 մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 4

Ապավեն համայնքում 2015 թվականին տեղացած սաստիկ կարկուտի պատճառով 60%-ով վնասված տանիքների վերանորոգման համար անհրաժեշտ է իրականացնել «Կարկտահարություններից համայնքի տների և համայնքապետարանի վնասված կտուրների վերանորոգում» ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ օգնել համայնքի բնակիչներին և համայնքապետարանին վերանորոգել իրենց տանիքները, որը կխթանի կենցաղային կահույքի պահպանմանը և բնակիչներին համայնքում ամրապնդմանը:

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Կատարել համայնքի վնասված տանիքների վերանորոգում:

1.2. Ձեռք բերել համապատասխան սարքավորումներ և գործիքներ:

1.3. Ձեռք բերել ազդեցուտ կամ մետաղյա շիֆերներ:

1.4. Կատարել կառուցման աշխատանքներ:

1.5. Կառուցել ջրահերացման որակյալ համակարգ:

1.6. Կատարել փաստաթղթերի ձևակերպում:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ և անհրաժեշտ գումարի 3%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Ապավեն համայնքի բնակիչների 50 %-ը: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.:

Ծրագրի համառոտ նկարագրություն.

Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, ստանալ համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ: Ծրագրի իրականացումից հետո համայնքի բնակիչները կապրեն ապահով և անվտանգ տներում:

Ծրագրի բյուջեն կազմում է՝

Ընթացիկ ծախսեր՝ 9մլն դրամ

Կապիտալ ծախսեր՝ 10մլն դրամ

Ընդհանուր բյուջեն՝ 19մլն դրամ:

4. ՀԶԾ ֆինանսավորում


ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերը ֆինանսավորվելու են՝

- Համայնքի սեփական եկամուտներից,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներից
- Արտաքին պաշտոնական դրամաշնորհներից,
- Բարեգործություն/ավիրատվություններից
- Այլ աղբյուրներից,

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացման համար չկան առկա միջոցներ, նրանց համար անհրաժեշտ է գումար ապահովել:

5. ՀԶԾ մոնիթորինգ

ՀԶԾ մոնիթորինգը կիրականացվի համաձայն Մոնիթորինգի անձնագրով (Հավելված 3) սահմանված ցուցանիշների և ժամանակացույցի:



Ծ Ր Ա Գ Բ Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 1

**«Միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների վերանորոգում և բարելավում»
(Ծրագրիանվանում)**

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքում հասարակական տրանսպորտի աշխատանքի և համայնքային ճանապարհային ենթակարուցվածքների պահպանում և շահագործում:						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքի բնակիչներին բարեկարգ ճանապարհով և հասարակական տրանսպորտով ապահովում:						
	Ցուցանիշներ Եկամտի աճ(%)	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		100	105	110	115	120	130
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Բարեկարգված միջհամայնքային, ներհամայնքային ճանապարհներ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		1	2	8	15	20	30
	2. Բարելավված հասարակական տրանսպորտ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
0		1	5	6	8	10	
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.</p> <p>1.1. Կատարել միջհամայնքային ճանապարհների վերանորոգում /խճապատում/:</p> <p>1.2. Կատարել ներհամայնքային ճանապարհների վերանորոգում /խճապատում/:</p> <p>1.3. Կատարել ճանապարհների կահավորում:</p> <p>1.4. Ներհամայնքային ճանապարհների լուսավորություն անցկացնել:</p> <p>1.5. Երկու կանգառի կառուցում:</p> <p>1.6. Հեղեղատարերի կառուցում /ջրահեռացման առուններ/:</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.</p> <p>2.1. Լոռու մարզպետարանի տրանսպորտի բաժնի հետ քննարկել, որպեսզի հասարակական տրանսպորտի գծի շահագործում իրականացվի, որը կնտաստի նաև կից Արծնի համայնքին:</p>						
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝ 15մլն դրամ</p> <p>Կապիտալ ծախսեր՝ 20մլն դրամ</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 35մլն դրամ՝</p>						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	մեխանիզացիա, դրամական միջոցներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը						
Ծրագրի հիմնական շահառուները	Ապավեն համայնքի բոլոր բնակիչները:						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2020թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Այժմ համայնքի ճանապարհները գտնվում են անմխիթար վիճակում, կահավորված չեն և բացակայում է փողոցային լուսավորությունը: Համայնքի բնակչությունը չի կարողանում օգտվել հասարակական տրանսպորտից: Ծրագրի իրականացումից հետո համայնքում մեքենաները կերթեվեկեն անվտանգ, գյուղացիները հեշտ կհասնեն բուժ-սպասարկման հաստատություններ, սպառման շուկաներ, մայրուղի և						



գնումացիների սոցիալ-տնտեսական վիճակը կրարելավվի:

Օ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 2

«Համայնքի միջին ճնշման գազատարի կառուցում»

(Շրագրիանվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բնակիչների սոցիալական մակարդակի բարելավում:						
Շրագրի անմիջական նպատակ	Համայնքի բնակիչներին գազով ապահովում						
	Ցուցանիշներ աճ (%)	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	0	0	110	115	120	150	
Շրագրի միջանկյալ արդյունքներ	1. Սոցիալական մակարդակի բարձրացում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	0	7	8	9	10
	2. Կիսակառույց գազատարի արկայություն						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
	0	0	6	7	9	10	
Շրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.</p> <p>1.1. Տրամադրել կիսակառույց գազատար, համապատասխանեցնելով այն պահանջներին:</p> <p>1.2. Ձեռք բերել համապատասխան խողովակներ:</p> <p>1.3. Ձեռք բերել համապատասխան սարքավորումներ:</p> <p>1.4. Կատարել կառուցման աշխատանքներ:</p> <p>1.5. Կատարել փաստաթղթերի ձևակերպում:</p> <p>1.6. Կատարել պետական գրանցում:</p> <p>Շրագրի իրականացման համար առկա փաստաթղթերը.</p> <p>1. Աշխատանքային նախագիծը /Ելակետային տվյալներ, գազմատակարարում, նախահաշիվ/,</p> <p>2. Փորձաքննության նախահաշիվ:</p>						
Շրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝ 3 մլն դրամ</p> <p>Կապիտալ ծախսեր՝ 13 մլն դրամ</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 16 մլն դրամ:</p>						
Շրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, մեխանիզացիա, դրամական միջոցներ						
Շրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը						
Շրագրի հիմնական շահառուները	Ապավեն համայնքի բոլոր բնակիչները:						
Շրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2017թ. - Ավարտ՝ 2019թ.						
Շրագրի համառոտ	2011 թվականին սկսված ծրագիրը այժմ գտնվում է անավարտ վիճակում: Գտնել						



նկարագրություն	դոնոր կազմակերպություն, այնուհետև կազմակերպել համապատասխան աշխատանքները:
----------------	--

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 3

«Խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգում և լրացուցիչ ջրահավաք կայանի կառուցում»
(Մրագրիանկառու)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի խմելու ջրի կորուստների կանխում և բնակիչներին լիարժեք խմելու ջրով ապահովում							
Մրագրի անմիջական նպատակ	Համայնքի բնակիչներին լիարժեք ջրամատակարարման ապահովում							
	Ցուցանիշներ աճ(%)	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
		2016	2017	2018	2019	2020	2021	
		100	105	110	115	125	140	
Մրագրի միջանկյալ արդյունքներ	1. Միջհամայնքային խմելու ջրի վերանորոգված ցանց							
	Ցուցանիշներ կմ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
			2016	2017	2018	2019	2020	2021
			1	2	7	15	25	40
	2. Կառուցված լրացուցիչ ջրահավաք կայան							
	Ցուցանիշներ երթուղի	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
		2016	2017	2018	2019	2020	2021	
		1	2	3	5	8	10	
Մրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.</p> <p>1.1. Կատարել միջհամայնքային խմելու ջրի ցանցի վերանորոգում:</p> <p>1.2. Կառուցել լրացուցիչ ջրահավաք կայան:</p> <p>1.3. Ձեռք բերել համապատասխան խողովակներ:</p> <p>1.4. Ձեռք բերել համապատասխան սարքավորումներ և նյութեր:</p> <p>1.5. Կատարել կառուցման աշխատանքներ:</p> <p>1.6. Կառուցել ջրահավաք կայանի ցանկապատը:</p> <p>1.7. Նորոքել կենտրոնական ջրամբարի ցանկապատը:</p> <p>1.8. Կատարել փաստաթղթերի ձևակերպում:</p>							
Մրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 3մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 5մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 8մլն դրամ							
Մրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, մեխանիզացիա, դրամական միջոցներ							
Մրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը և բնական աղետները, անբարենպաստ եղանակը							
Մրագրի հիմնական շահառուները	Ապավեն համայնքի բոլոր բնակիչները և համայնքի վարչական տարածքում տեղակայված սահմանապահ ուղեկալի զին. ծառայողները:							
Մրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2019թ.							
Մրագրի համառոտ նկարագրություն	Այժմ համայնքի խմելու ջրի ցանցը սպասարկում է նաև և համայնքի վարչական տարածքում տեղակայված սահմանապահ ուղեկալին: Խմելու ջրի կորուստի կանխումը և լրացուցիչ ջրահավաք կայանի կառուցումը անխափան կդարձնի ջրամատակարարումը:							



Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 4

**«Կարկտահարություններից համայնքի տների և համայնքապետարանի վնասված կտուրների վերանորոգում»
(Շրագրիականում)**

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	2015 թվականին համայնքում տեղացած կարկուտի պատճառով 60%-ով վնասված տանիքները:						
Շրագրի անմիջական նպատակ	Համայնքաբնակների մարզական կյանքի ակտիվացման ապահովում:						
	Ցուցանիշներ աճ(%)	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	50	110	120	130	140	150	
Շրագրի միջանկյալ արդյունքներ	1. Օգնել համայնքի բնակիչներին և համայնքապետարանին վերանորոգել իրենց տանիքները:						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	1	1	2	3	4
	2. Կենցաղային կահույքի պահպանումը և բնակիչներին համայնքում ամրապնդումը						
	Ցուցանիշներ (%)	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
	0	10	60	100	100	100	
Շրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ. 1.1. Կատարել համայնքի վնասված տանիքների վերանորոգում: 1.2. Ձեռք բերել համապատասխան սարքավորումներ և գործիքներ: 1.3. Ձեռք բերել ազբեստե կամ մետաղյա շիֆերներ: 1.4. Կատարել կառուցման աշխատանքներ: 1.5. Կառուցել ջրահերացման որակյալ համակարգ: 1.6. Կատարել փաստաթղթերի ձևակերպում:						
Շրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 9մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 10մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 19մլն դրամ						
Շրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, տրանսպորտ, դրամական միջոցներ						
Շրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը						
Շրագրի հիմնական շահառուները	Ապավեն համայնքի բնակիչների 50 %-ը:						
Շրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2021						
Շրագրի համառոտ նկարագրություն	Այժմ համայնքի ազբեստե շիֆերապատ բոլոր նտերի և համայնքապետարանի տանիքները գտնվում են սոսոկյալի վիճակում: Մույն ծրագրի իրականացումը կբարելավի համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը: Անհրաժեշտ է՝ կատարել						

չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր
կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը:
Ծրագրի հավանության արժանանալուց հետո, ստանալ համապատասխան գումարը
և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ: Ծրագրի
իրականացումից հետո համայնքի բնակիչները կապրեն ապահով և անվտանգ
տներում:



<p>8. Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը</p>	0.2	0.2	0.2	0.3	0.3	0.3	0.3	0	1.5
<p>9. Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում</p>	0	0	0	0	0	0	0	0	0
<p>10. Աջակցություն պետական պաշտպանության իրականացմանը</p>	0	0	0	0	0	0	0	0	0
<p>11. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացում</p>	0	0	0	0	0	0	0	0	0
<p>12. Գյուղական բնակավայր ընդգրկող համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանումը</p>	0	0	0	0	0	0	0	0	0
<p>14. Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող համայնքներում՝ զբոսաշրջության զարգացման խթանում</p>	0	0	0	0	0	0	0	0	0
<p>15. Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում</p>	0	0	0	0	0	0	0	0	0

0	0	0	0.5	1.8	0	0	0	0	լուծված չէ
			0	0					լուծված չէ
0	0	0	0	0	0	0	0	0	0
0	0	0	0	0	0	0	0	0	0
			0	0					լուծված չէ
0	0	0	0	0	0	0	0	0	0
0	0	0	0		0				

<p>Համայնքային ներազդեցության համապարհուն լինելու անհրաժեշտ համապայմանները կապահովելու հարցում:</p> <p>Համայնքում կառավարված պետության կազմակերպչական հարցերի լուծումը:</p>	1	1	0	100	100	100	X	Համայնքի բնակիչներ	Հարցում
<p>Համայնքում կառավարված պետության կազմակերպչական հարցերի լուծումը:</p>	0	0	0	2	2	2	X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
<p>Համայնքը տնտեսաբար հաստատանալի էրախաբարի պարզում 5 և ավելի տարի ընթացքում ունեցող մեքենաների հարցում:</p>	0	0	0	0	0	0	X	Համայնքապետարան/տնտեսաբար լուծումը/տնտեսաբար լուծումը/հարցում	Փաստաթղթային ուսումնասիրություն/հարցում
<p>Համայնքի ներազդեցության տակ գտնվող համապարհուն լինելու անհրաժեշտ համապայմանները կառավարված պետության կազմակերպչական հարցերի լուծումը:</p>	0	0	0	0	0	0	X	Համայնքապետարան/տնտեսաբար լուծումը/տնտեսաբար լուծումը/հարցում	Փաստաթղթային ուսումնասիրություն/հարցում
10. Այլազգային պետական պաշտպանության իրականացումը									
11. Այլազգային զինվորի նվազագույն և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջազատման իրականացումը									
<p>Համայնքում տնտեսաբար կամ քաղաքացիական պաշտպանության շտաբի անդամներ:</p>	արկա	արկա	արկա	արկա	արկա	արկա	արկա		
<p>Համայնքում քաղաքացիական պաշտպանության շտաբի անդամներ:</p>	մասնակի						X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
<p>Համայնքում քաղաքացիական պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության իրականացումը:</p>	կատարվում է	կատարվում է	կատարվում է	կատարվում է	կատարվում է	կատարվում է	X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
<p>Համայնքում քաղաքացիական պաշտպանության իրականացումը:</p>	կա	կա	կա	կա	կա	կա	X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
12. Գյուղական բնակավայր բնակչության համայնքներում գյուղատնտեսության զարգացման իրականացումը									
<p>Համայնքի գյուղատնտեսության զարգացումը:</p>	0	2%	5%	15%	25%	50%	X	Գյուղատնտեսության զարգացումը/բնակչության	Հարցում կամ խնդիր հարցազրույց/ֆորում
<p>Բնորոշիչային տարեկան աճ:</p>	0	2%	5%	15%	25%	50%	X	Համայնքապետարան	Հարցում
<p>Համայնքի մշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի հարցում:</p>	10%	10%	20%	50%	80%	90%	X	Համայնքապետարան/ՀԾԸ	Հարցում
13. Համայնքում շրջակա միջավայրի պահպանություն									
<p>Համայնքում էներգիայի արդյունավետ օգտագործումը:</p>	0%	0%	1%	1%	5%	15%	X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
<p>Համայնքի կազմակերպչական մասնակցությունը:</p>							X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
<p>Համայնքի մարզական շարժարկեր:</p>	բացակայում է	արկա	արկա	արկա	արկա	արկա	X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
14. Զրույցային հոսանքային ունեցող համայնքներում գյուղատնտեսության զարգացման իրականացումը									
<p>Զրույցային հոսանքային ունեցող համայնքում:</p>	0	0	0%	2%	3%	5%	X	Զրույցային հոսանքային ունեցող համայնքներ	Իմաստը հարցազրույց/ֆորում
<p>Համայնքի աջակցվող գյուղատնտեսության զարգացումը:</p>	1	1	5	20	30	40	X	Համայնքապետարան	Իմաստը հարցազրույց/ֆորում
15. Համայնքի երիտասարդության խնդիրների լուծման ուղղված միջոցառումների կազմակերպում									
<p>Համայնքի միջոցներով կազմակերպված միջոցառումների թիվը:</p>	0	0	0	1	4	5	X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
16. Համայնքում մեքենայի և քաղաքացիական պաշտպանության իրականացումը									

Համայնքում Ցնկոյության ան նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով	0.2																			X	ՔՎԿԳ բաժին	Հարցում
Ցնկոյության նկատմամբ ունեցող ընտանիքների և ան նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով	0	0.2	0.2		0.4%				0.6%											X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
17. Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացում, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծում																						
Ընկատմանը հիվանդությունների ինվակցիայից պաշտպանվելու նկատմամբ, արտահայտված տոկոսներով	0.1%	0.1%	0.1%		0.2%				0.2%											X	Համայնքապետարան, համայնքապետարանի ենթակայության բժշկական հաստատություններ	Փաստաթղթային ուսումնասիրություն կամ հարցում
Համայնքային ենթակայության բռնական հիմնարկի կողմից այլ բուժական հիմնարկներ հաղորդված ազդեցությունների քանակի նկատմամբ նախորդ տարվա համեմատ	0																			X	Բժշկական հաստատություններ	Հարցում կամ հարցազույց
18. Համայնքային հասարակական կյանքի հաշմանդամների մասնակցության խթանում																						
Համայնքային կյանքում կազմակերպվող միջոցառումներ, որոնց մասնակցի են հաշմանդամություն ունեցող անձինք (որպես ընդհանուր միջոցառումների թվաքանակի տոկոս)	0	0	0		20%				30%											X	Հաշմանդամություն ունեցող անձինք	Համայնքի հարցազույց/Փրկուս խումբ
Համայնքային կյանքում կազմակերպվող միջոցառումների մասնակցած հաշմանդամություն ունեցող անձանց թվի (որպես հաշմանդամություն ունեցող անձանց թվում)	0	0	0		20%				30%											X	Հաշմանդամություն ունեցող անձինք	Համայնքի հարցազույց/Փրկուս խումբ
19. Բարեգործության խթանում																						
Բարեգործական նպատակներով հանգանակված գումար հաշվարկված որպես համայնքի սեփական նվաճումների տոկոս	0	0	0		0.1%				0.2%											X	Համայնքապետարան/բարեգործական կայան/խոյուրդուն	Հարցում կամ հարցազույց
Համայնքի կողմից կազմակերպված բարեգործական միջոցառումների քանակ	1	1	1					1		2										X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն